Հարկ է իմանալ, որ գոնոռեան միզուլինների թեթև ընթացող հիվանդություն չէ: Դա առաջին հերթին վարակ է, որն ախտահարում է օրգանիզմը, ուստի հիվանդության կասկածի դեպքում պետք է հնարավորինս շուրջ դիմել բժշկի, խստորեն կատարել նրա ցուցումները՝ շմոռանալով հնարավոր հետևանքների մասին, հափկապես կրկնակի վարակման ժամանակ.

Ժամանակակից դեղամիջուկներով գոնոռեան ենթակա է լրիվ բուժման Որքան վաղ է դիմում հիվանդը բժշկի, այնքան կարճ է բուժման ժամկետը. Հիվանդության քրոնիկական ձևերի ժամանակ և հափկապես բարդությունների դեպքում կատարվում է երկարագույն բուժում մասնագիտացված բուժիմնարկներում:

ՏՐԻԽՈՄՈՆԻԱԶ

Ի հեճուկս տարածված կարծիքի, տրիխոմոնիազը վեճերական հիվանդություն չէ Այն հարուցում է մակաբույծ միաբջիջ հեշտոցային տրիխոմոնիազը: Վիճակագրական տվյալների համաձայն, տրիխոմոնիազով տրառապում և երկրագնդի բնակչության 10%-ը. Մեծ մասամբ վարակը տեղի է ունենում սեռական ճանապարհով, և հազվադեպ անուղղակի շփման վարակված սպիրակեղենի, հարդարանքի առարկաների միջոցով և այլն Երբեմն կարող են վարակվել փոքրիկ աղջիկները՝ արտասեռական ճանապարհով, հիվանդ մորից, եթք չեն պահպանվում հիգիենայի տարրական կանոնները:

Տրիխոմոնիազը բազմաօջախային հիվանդություն է, որի ժամանակ ախտահարվում են գործնականում բոլոր միզասեռական օրգանները, բորբոքման արտահայտված նշաններով:

Տարբերվում է նաև անախտանիշ փրկիչումնիազ, եթե փեղային բորբոքային երևոյթները և արդադրությունը բացակայում են, իսկ ախտորոշումը հնարավոր է դառնում միայն մանրակրկիդ լաբորատոր հետազոտության միջոցով։ Տրիխումնիազը թե փղամարդկանց, թե կանանց մոտ հանդիպում է նույն հաճախականությամբ Սակայն կանանց մոտ հիվանդությունն առավել սուր է արդահայտվում, որը կապված է նրանց սեռական համակարգի անափոմիաֆիզիոլոգիական առանձնահարկությունների հետ։

Վարակվելուց 3-4 օր անց ի հայտ են գալիս հիվանդության առաջին նշանները՝ մեծ քանակությամբ կանաչավուն, երբեմն փրփրախառն արդադրություն գոհած հովով Հեշտոցի և միզուկի լորձաթաղանթը բորբոքվում է, այդուցիւմ, նկատվում են արդարին սեռական օրգանների կարմրություն և քոր Երկարադի արդադրությունից մաշկը թրմում, գրգռվում է կարող են առաջանալ նաև մանր խոցեր, այրոցի զգացում, ցավ սեռական հարաբերության ժամանակ։

Սուր բորբոքային երևոյթները կարող են անհետանալ թե՛ ինքն իրեն, թե թերի բուժման հետևանքով Այսպիսով, ախտաբանական երևոյթները մեղմանում են, և փրկիչումնիազը անցնում է քրոնիկական փուլ՝ երկարադի ու համառ ընթացքով Դրա հետ մեկտեղ փոխվում է արդադրության բնույթը։ Այն դառնում է դեղնավուն կամ սպիտակ, քանակը քշանում է, իսկ հեշտոցի լորձաթաղանթի կարմրությունը և բորբոքումն ընդհանրապես կարող են բացակայել։

Անախտանշան կամ հիվանդության թույլ արդահայտված ձևերով փառապող անձինք վիտանգ են ներկայացնում, քանի որ իրենց հիվանդ չեն համարում և կարող են մդմել սեռական կապերի մեջ՝ դրանով իսկ վրանգելով ուրիշների առողջությունը։

Տրիխումնիազը ոչ հազարեալ համակցվում է սիզասեռական այլ վարակիչ հիվանդությունների՝ գոնոռեայի, խլամիոդիոզի, սմկային ախտահարումների հետ։ Ուստի փրկիչումնիազի դեմ ուղղված առողջապահական բոլոր միջոցառումները ուղղված են նաև նըշ-

Ված վարակիչ հիվանդությունների դեմ: Հայտնի է, որ մանկածին հասակի կանանց և երիտրասարդ գրղամարդկանց մովք փրիխոմոնիազը պատճառ է դառնում ինքնաբեր վիժումների, չբերության և անպրոյդ ամուսնությունների: Ուստի, փրիխոմոնիազի դեմ պայքարը դառնում է ոչ միայն մաշկավեներաբանի, այլ նաև մանկաբարձ-գինեկոլոգների, սեքսոպաթոլոգների և ուրոլոգների համար խիստ այժմեական

ՈՉ ԳՈՆՈՒԵԱՅԻ ՄԻՉՈՒԿԱԲՈՐԵՐ

Ոչ գոնուեային միզուկաբորբերը (ՈԳՄ), որոնք սովորաբար կոչվում են սովորական ուրեթրիֆներ, իրենցից ներկայացնում են սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների մի մեծ խումբ Նրանց հարուցիչները բազմապիսի են մանրեներ, վիրուսներ, ինչպես նաև մի խումբ այլ միկրոօրգանիզմներ, որոնք միաժամանակ մարդու այլ հիվանդությունների պատճառ կարող են հանդիսանալ:

Սովորաբար վարակվում են սեռական հարաբերության միջոցով Վարակի փոխանցումը հնարավոր է նաև բերանասեռական ու հետանցքային հարաբերության ընթացքում Հազվադեպ արձանագրվել է վարակի փոխանցում չախտահանված բժշկական գործիքների միջոցով. Միզասեռական խլամիդիային, միկոպլազմային և ուրեապլազմային ախտահարումները հաճախականությամբ մի քանի անգամ գերազանցում են գոնոնեան և լուրջ հիմնահարց են ժամանակակից բժշկության համար Վիճակը ծանրանում է նաև նրանով, որ այդ հարուցիչները վնասում են ոչ միայն միզասեռական ուղիները, այլև երբեմն դառնում են շնչուղիների, աշքերի, հողերի, լյարդի, նյարդային և սրբանոթային համակարգերի ախտահարման պատճառ:

Սեծ է նաև նշված վարակիչ հիվանդությունների դերը անպրոյդության ժամանակ, թե գրղամարդկանց և թե կանանց մովք, գրղամարդկանց սեռական թուլության, ինչպես նաև հոլիության, պրոյի և նորածինների ախտաբանության մեջ:

Սաշկավեներաբաններին հայփնի է, որ հիվանդների մեծ մասի մոտ, որոնք դառապում են միզասեռական օրգանների ոչ գոնոռեային բորբոքային հիվանդություններով, հայփնաբերվում է խլամիդիոզ կամ միկոպլազմոզ. Այդ հիվանդությունները, բնական է, դարբեր են, դարբեր են և նրանց հարուցիչները, սակայն նրանք միզասեռական օրգանների ախտահարման ժամանակ ունեն ընդհանուր կլինիկական պատկեր.

Իհարկե, կան մի շարք սկզբունքային առանձնահատկություններ, քայլ նրանք կարող են որոշվել միայն բժշկի կողմից լաբորատոր հետազոտության օգնությամբ: Թե խլամիդիոզը, որեւապլազմոզը և թե միկոպլազմոզը չունեն բնորոշ կլինիկական պատկեր Արդարին սեռական օրգանների և հեշտոցի ախտահարումը չի դարբերվում նույնադիա դեղակայում ունեցող այլ բորբոքային հիվանդությունների ախտանշաններից:

Խլամիդիոզը հիվանդների մեծ մասի մոտ ընթանում է ենթասուր (թառամ) քրոնիկական, հազվադեպ՝ սուր բորբոքման ձևով Հիվանդությունն ի հայտ է գալիս 5-30 օր գոնությամբ գաղտնի (թաքնված) շրջանից հետո և կարող է առաջանել սեռական օրգանների զանազան բնույթի ախտահարումներ Տղամարդկանց մոտ ի սկզբանե ախտահարվում է միզուկը, իսկ հետո մյուս օրգանները՝ շագանակագեղձը, սերմնաբշպերը, ամորձու հավելումները Կանանց մոտ հաճախ ախտահարվում են միզուկը, արգանդը, ձվարանները. Հիվանդության սուր ընթացքի դեպքում առաջանում են այնպիսի ախտանշաններ, ինչպիսիք են միզասեռական օրգանների լորձաթաղանթի կարմրություն, թարախային արդադրություն միզուլիներից և հեշտոցից, հաճախամիզություն, քոր, այրոց, այսինքն՝ երևույթներ, որոնք հիշեցնում են գոնոռեա Սակայն հիվանդությունը հազվադեպ է այսպես ընթանում. Շատ ավելի հաճախ հիվանդներն ունենում են լորձաթարախային արդադրություն և թույլ քոր, իսկ երբեմն հիվանդությունն ընդհանրապես չի անհանգստացնում հիվանդին ընթանալով անախստացնա Նման փոփոխությունները բնորոշ են նաև միկոպլազմոզին Ուստի

Նրանց փարբերակիչ ախսպորոշումը հնարավոր է միայն լաքորա-
փոր հետազոտությամբ Երբեմն խլամիդիոզով և միկոպլազմոզով
հիվանդների մոտ առաջանում են այսպես կոչված արդասեռա-
կան բարդություններ, երբ ախսպահարվում են փարբեր օրգաններ
և համակարգեր Դա բկանցքի (ֆարինգիտ), աչքի (կոնյունկտի-
վիտ), ականջի (օբիտ), ինչպես նաև շնչառական համակարգի
(թոքաբորբ), միզուլինների (ցիստիտ, պիելոնեֆրիտ) և նույնիսկ հո-
դերի (արթրիտ) ախսպահարումներն են

Սիզասեռական համակարգի բորբոքային հիվանդությունները,
որոնք պայմանավորված են խլամիդիայով, ուրեապլազմայով և
միկոպլազմայով, մեծ վքանգ են ներկայացնում ոչ միայն հոդ
կնոջ, այլև նորածնի համար:

Այս սեռավարակների բուժումը կախված է հիվանդության վա-
ղենմությունից, ախսպահանական ընթացքի բնույթից, այլ օրգաննե-
րի ընդգրկման ասպիճանից և օրգանիզմին բնորոշ առանձնա-
հատկություններից Այդուհանդերձ բուժումը անհրաժեշտ է սկսել
որքան հնարավոր է վաղ, որպեսզի հիվանդը չկանգնի բարդու-
թյունների առջև

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ ՎԱՐԱԿՆԵՐ

Վիրուսային հիվանդությունները բազմապիսի են Դրանցից մի
քանիսը հասարակ ու կրկնվող հերպեսները և սրածայր կոնդիլո-
մանները (սեռական գորդնուկները) փոխանցվում են սեռական ճա-
նապարհով Այս հիվանդությունների հարուցիչները փարբեր վի-
րուսներ են. Հերպես առաջացնում են 1-ին և 2-րդ տիպի
վիրուսները 1-ին տիպի վիրուսներն ախսպահարում են առավելա-
պես դեմքը, շրջունքները, իրանի մաշկը, իսկ 2-րդ տիպի վիրուս-
ները սեռական օրգանները

Հերպեսը բավական փարածված հիվանդություն է Այն հարու-
ցող վիրուսները մարդկանց մոտ գրնվում են «քնած» վիճակում,
ինչը պայմանավորված է օրգանիզմի պաշտպանողական հավկու-
թյուններով Սակայն երբեմն արդաքին և ներքին փարբեր գոր-

ծոնների ազդեցությամբ (մրսածություն, նյարդային, հորմոնային և նյութափոխանակության խանգարումներ). Նրբ փեղի է ունենում օրգանիզմի դիմադրողականության անկում, վիրուսներն ակտիվանում են և կարող են ախտահարել ոչ միայն մաշկը և լորձաթաղանթը, այլև աչքերը, նյարդային համակարգը, նույնիսկ զիսուղեղը

Ակտիվացած վիրուսը երկար ժամանակ պահպանում է իր ախտածնությունը և սեռական շիման դեպքում փոխանցվում է ոչ միայն զուգընկերոջը, այլև վարակի վրանգ է ներկայացնում նորածնի համար

Տարբերում են հերպեսի առաջնային և կրկնվող ձևերը Առաջնային միզասեռական հերպեսը զարգանում է կարճաժամկետ գաղտնի շրջանից հետո, սեռական հարաբերությունից 2-5 օր անց Արդարացին սեռական օրգանների շրջանում առաջանում են ցավ, այրոց, քոր Գործընթացն ուղեկցվում է նաև սեռական օրգանների վրա շիճուկային պարունակությամբ մանր բշտիկների առաջացումով։ Երբեմն հիվանդների մոտ բշտիկները չորանում են, վերածվում շճային կամ շճաթարախային կեղևների, որոնք հնդիկացայում պոկվում են փեղում թողնելով գունակային բծեր։

Հաճախ բշտիկները պայթում են և նրանց փեղում առաջանում են վառ կարմիր մակերեսային վերքեր (էրոզիաներ), որոնք միաձուլվելով, կարող են առաջացնել մեծ օջախ։ Հերպեսի միջին փեղությունը 10-12 օր է։ Չնդ որում, հիվանդների մեկ երրորդի մոտ դիվակում են ընդհանուր երևոյթներ՝ գլխացավ, փենդ, մկանային ցավեր, մեծանում են աճուկային ավշահանգույցները

Կրկնվող միզասեռական հերպեսը ավելի մեղմ է ընթանում և արագորեն անհետանում է։ Մրա ժամանակ ցանավորումը սակավ է, թե ընդհանուր և թե՛ փեղային զգացողությունը մեղմ է Չնայած հիվանդության այս ձևի ժամանակ կլինիկական երևոյթներն աննշան են, այնուամենայնիվ այն հիվանդին մեծ անհանգստություն է պատճառում, քանի որ շատ հաճախ է կրկնվում (նույնիսկ 1-2 ամիսը մեկ անգամ) և երբեմն փեղում է երկար փարիներ Պեղը է նշել, որ հիվանդներից շատերի մոտ բշտիկների ա-

ոաջապումից մի քանի ժամ կամ 1-2 օր առաջ ի հայտ են գալիս նախանշաններ հետազա ախտահարման գույնում ծակոցների ձևով Սիզասեռական հերպետիկ ինֆեկցիան կարող է ընթանալ նաև անախտանշան, որն, անկասկած, մեծ նշանակություն ունի հիվանդության բարածման գործում, հարկապես նրանց մոտ, ովքեր վարում են անկանոն սեռական կյանք:

Հերպետիվ հիվանդների բուժումը համալիր է. արդաքին միջոցների հետ զուգահեռ կիրառվում են քիմիա- և իմունոթերապիա, լազերաբուժում, պարվասղումներ և այլն Չնայած նշվածին ոչ միշտ է հաջողվում կանխել կրկնությունները և հիվանդության բարդությունները.

Սրածայր կոնդիլոմաները թե բողամարդկանց և թե՛ կանանց մոտ բավական բարածված են Նրանք փոխանցվում են սեռական ճանապարհով, հաճախ բեղակայվում են սեռական օրգանների վրա, բայց կարող են նաև ախտահարել հետանցքի շրջանը և շեքը Սրածայր կոնդիլոմաները ունեն վարդագույն նորագոյացության գույնը և գորգունուկ են հիշեցնում, իսկ գերածելիս նմանվում են մորու պարունակությամբ Ոմանց մոտ նրանք մենափոր են, մյուսների մոտ բազմակի Հազվադեպ սրածայր կոնդիլոմաները կարող են հասնել իսկա շափերի փակելով հեշտոցամուքը, հետանցքը, արդաքին սեռական օրգանները Ընդ որում դրանք կարող են թափանցել հյուսվածքի խորքը և քայքայել այն.

Կախված սրածայր կոնդիլոմաների բեղակայումից՝ հիվանդների գանգափները կարող են լինել բարաբնույթ. Սրածայր կոնդիլոմաները սովորաբար բարորակ են ընթանում և միայն շատ հազվադեպ բեղի է ունենում նրանց շարորակացում Սակայն կան բվյալներ, որ այդ հիվանդության հարուցիչները՝ վիրուսները, մեծ դեր ունեն կանանց արգանդի վզիկի քաղցկեղի և արյան շարորակ հիվանդությունների առաջացման գործում.

Բուժման նպատակով օգտագործվում են հարուկ քայքայիչ պարասպուկներ, ինչպես նաև էլեկտրակոագույացիա, կրիոթերապիա և այլն

ՄԱԿԱԲՐՈՒԾԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սարդու մակաբրուծային հիվանդություններից թերևս միայն յայլքի ոջլոփությունը և քոսը վստահորեն կարելի է դասել սեռավարակների շարքին Իհարկե, վարակի վորխանչումը հնարավոր է նաև արփասեռական ճանապարհով ուրիշի անկողնուց օգնելիս, հագուստը օգնագործելիս և այլն Հաճախ այն դիվակում է մարդկանց հոծ կուփակման վայրերում զորանոցներում, ճամբարներում, հանրակացարաններում Ներկայումս, շնայած բնակչության սանիգարահիգինիկ մակարդակի բարձրացմանը, նկագում է մաշկի մակաբրուծային հիվանդություններով հիվանդների քանակի զգալի աճ

Յայլքի ոջլոփությունը բավական հաճախ հանդիպում է վեներական հիվանդություններով կրառապող անձանց մոտ, ովքեր հագուստեալ վարում են անկանոն սեռական կյանք

Յայլքի ոջլոփությունն ախտորոշվում է գուստուական զննումով Յայլքի շրջանում մազերի մեջ, անզեն աշքով (կամ խոշորացույցով) կարելի է գուստուական հարուցիչը յայլքի ոջիլը և ձվերը, որոնք ամրանում են մազի սրորին հագուստուածին և նման են հանգուցիկների: Մաշկը ախտահարվում է, երբ մակաբույժը թափանցում է մաշկի մեջ և սկսում արյուն ծծել Առաջանում են քոր, մանր արյունային բծեր և քորի հեփեանքով՝ մաշկի գրգռում և թարախային վարակի միացում: Սովորաբար հիվանդությունը սահմանափակվում է յայլքի շրջանով, սակայն բարձիթողի դեպքերում, հագուստեալ մազերի մարդկանց մոտ կարող են ախտահարվել նաև ազդրերը, մարմինը, նույնիսկ մորուքը և բեղերը, իսկ երեխաների մոտ թարթիչները և գլխի մազածածկ մասը.

Յայլքի ոջլոփության կանխարգելման գրավականը հիվանդների և նրանց սեռական գուգընկերների վաղ ախտորոշումն ու բուժումն են:

Քոսով վարակվում են անմիջական շփման միջոցով, այդ թվում սեռական ճանապարհով, երբ նրա հարուցիչը՝ գուգը, ներթափան-

յում է մաշկի մեջ Կարելի է վարակվել նաև հիվանդի օգտագործած կենցաղային իրերից

Հիվանդությունը քնորոշվում է հանգույիկային և բշփիկային մանր կանավորումով, որն ուղեկցվում է քորով. Սովորաբար քորն ուժեղանում է գիշերը, դաքաք անկողնում Հիվանդությունն ախտահարուս է իրանի և վերջույթների մաշկը, սակայն ունի նախասիրած գունդակայում ձեռքերի միջմագնային ծալքերը, դողամարդու սեռական օրգանները, կանանց կրծքերը, հագրկապես պտուկների շրջանը: Երեխաների մոտ կարող է ախտահարվել ափերի, ներքանների և գլխի մաշկը Երբեմն քուը բարդանում է թարախաբշպիկային ախտահարումներով, որը դժվարացնում է հիվանդության ախտորոշումը Մաշկի ուշադիր զննումը և, իհարկե, լաբորատորի հետազոտության արդյունքները, որոնք կադարձում են մասսավիճակած մաշկավեներաբանական հիմնարկությունում, օգնում են բժշկին ճիշգր կողմնորոշվել ախտորոշման և բուժման հարցում:

ՄՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բազմաթիվ են մարդու սնկային հիվանդությունները Նրանք ախտահարում են մաշկը, եղունգները, մազերը, լորձաթաղանթները և սովորաբար փոխանցվում են կենցաղային ճանապարհով՝ առօրյա իրերի միջոցով: Սակայն կան նաև այնպիսի սնկային հիվանդություններ, որոնք փոխանցվում են սեռական շփման ժամանակ: Դրանցից առավել ուշագրավ է կանդիդա սնկերով հարուցվող կանդիդով հիվանդությունը Այդ հիվանդության լուսաբանումը այժմեական է, քանի որ կանդիդա սնկերը, հագրկապես կանանց մոտ, միզասեռական օրգանների բորբոքման պատճառ են դառնում: Հայտնի է, որ երկարագու ընթացք ունեցող բորբոքումները հանգեցնում են օրգանիզմի դարբեր համակարգերի գործունության խանգարման, որն իր հերթին առաջացնում է ներոփիկ վիճակ:

Ընդհանրապես, կանդիդա սնկերը փարածված են բնության մեջ հայփնաքերվում են մրգերի և բանջարեղենի վրա, լինում են կաթի և նպարեղենի մեջ, լողավազաններում, բաղնիքներում և այլուր

Լինելով պայմանական ախտածին սլուցորդանիզմ, որն ապրում է մաշկի և լորձաթաղանթների վրա, կանդիդան կարող է երկար ժամանակ հիվանդություն չառաջաւայնել, քանի որ մարդը որոշակի անընկալություն ունի այդ սնկերի հանդեպ Սակայն արդաքին և ներքին գործոնների ազդեցության հետևանքով նրանք ձեռք են բերում հյուսվածքներ ախտահարելու և հիվանդություն առաջացնելու հավելություն Արդաքին գործոններից են մաշկի և լորձաթաղանթների մեխանիկական և քիմիական վնասվածքները, մասնագիտական գործոնները՝ պահածոների և քաղցրավենիքի արդադրության հետ կապված և մուգ ուժեղ քրդնարդադրությունը և այլն

Պակաս կարենոր դեր չունեն նաև ներքին գործոնները՝ ներզագիշ գեղձերի ֆունկցիայի խանգարումները, շաքարախսպը, վիտամինային անբավարարությունը, նյութափոխանակության խանգարումները, այլ հիվանդությունների հետ կապված օրգանիզմի դիմադրողականության անկումը. Բավական հաճախ կանդիդան հայտնաբերվում է հղիների և գինեկոլոգիական հիվանդություններ ունեցող կանանց հեշտոցում Կանդիդոզը զարգանում է նաև անկանոն և մեծ քանակությամբ հակաբիոփիկներ լինունող մարդկանց մոտ Այսպիսով, ակնհայտ է, որ շատ հիվանդություններ կարող են ուղեկցվել կանդիդոզով. Հիվանդը փասկուրեն վարակի աղբյուր է դառնում և կենցաղային, և՛ սեռական շփման ժամանակ, քանի որ հիվանդությունը ախտահարում է ոչ միայն բերանի խոռոչի, այլև բավական հաճախ՝ սեռական օրգանների լորձաթաղանթը: Սեռական օրգանների կանդիդոզը հանդիպում է բոլոր հասակի կանանց մոտ, արդահայտվում է արտառջին սեռական օրգանների բորբոքման ձևով, որն ուղեկցվում է կարմրությամբ, այգուցով և քորով: Բավական հաճախ լիմուն և սպիտակա

կագորշավուն արփադրություն, դեղ-դեղ սոռաջանում է փառ, որն ամուր «նստած» է լինում լորձաթաղանթին Երբեմն ախտահարումը անցնում է սեռական օրգանների և շեքի շրջակա մաշկին. Հիվանդներն սկսում են գանգափուկել հաճախամիզությունից, կրուրող ցավերից միզելու և սեռական հարաբերության ժամանակ, որի հետևանքով երբեմն անհնար է դառնում սեռական կյանքը Զարգանում է կայուն ներուժիկ ախտանշան Այս ամենը բնորոշ է հիվանդության սուր շրջանին Քրոնիկական փուլում հիվանդության նշանները սովորաբար մարում և խսպառ վերանում են. Տղամարդկանց մով արփաքին սեռական օրգանների կանդիդոզը սահմանափակում է առնանդամի գլխիկի մաշկի և թլիքի բորբոքումով, որն արփահայփում է կուրուկ կարմրությամբ, այգուցվածությամբ, սպիտակ փառով, այրոցով և քորով

Համարվում է, որ բուժման դժվարությունները կապված են այն հանգամանքի հետ, որ այդ վարակը զարգանում է երկրորդային ձևով վերը նկարագրված մյուս հիվանդությունների հենքի վրա

Առաջնային կանդիդոզի դեպքում ալպաքինման հեռանկարը բարենպաստ է, երբ հիվանդությունը ժամանակին ախտորոշվում և բուժվում է Երկրորդային կանդիդոզի ժամանակ, երբ գործընթացը զարգացնել է այլ հիվանդությունների հիման վրա, առողջացումը գլխավորապես կախված է նրանց բուժումից

ԶԵՌՔՔԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՆՉԱՆ

Այս հիվանդության մասին (կրծագր ԶԲԱՀ, ոռու.՝ СПИД, անգլ. AIDS) դեղեկություններն սկսեցին ի հայր գալ 80-ական թվականների սկզբներին, ԱՄՆ-ում Մի քանի դարի անց այն արդեն արձանագրվել էր աշխարհի համարյա բոլոր երկրներում. Հիվանդության հարուցիչը մարդու իմունային անբավարության վիրուսն է (կրծագր ՍԻԱՎ, ոռու. ВИЧ, անգլ. HIV), որը հայտնաբերվում է վարակված մարդու արփաթորանքի, սերմի և արյան մեջ. Դրան համապատասխան և որոշվում են ՍԻԱՎ-ով վարակ-

ման ուղիները արյան փոխներարկում, դեղորայքի ներարկում, սեռական հարաբերություն, պարունակած վարակ Որոշ հեղինակներ նշում են, որ ՄԻԱՎ-ը փոխանցվում է նաև սերպ կենցաղային շփման միջոցով շնայած այս հարցը մնում է դեռ վիճելի և կասկած է հարուցում։ ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի գլխավոր առանձնահարկությունն այն է, որ այն չունի բնորոշ կլինիկական ախտանշաններ Ապացուցված է, որ ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի ժամանակ զարգանում է իմունային անբավարարություն կամ, պարզ ասած, կորուկ իջնում է օրգանիզմի դիմադրողականությունը և այն դժվարությամբ է դիմակայում ոչ միայն վարակիչ, այլև ուռուցքային հիվանդություններին Ահա թե ինչու հիվանդները մեծ հակում են ցուցաբերում վարակիչ և ուռուցքային հիվանդությունների նկատմամբ։

Հայտնի է, որ իմունիտետը օրգանիզմի պաշտպանական մեխանիզմի ամբողջությունն է, որն ապահովութ և վարակի, այլածին ուռուցքային բջիջների, օրգանիզմ թափանցած տարբեր նյութերի ոչնչացումը ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի ժամանակ գալիքացող օրգանիզմի թուլությունը և անպաշտպանվածությունը հանգեցնում են այն բանին, որ սովորաբար թեթև ընթացող հիվանդությունները (հարբուխ, գրիպ և այլն) ունենում են բուն ընթացք, երբեմն առաջ բերելով անցանկալի բարդություններ

Բժշկությունն առայժմ ճշգրիտ բվյալներ չունի ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի ժագման ժամանակի և պատճառների վերաբերյալ։ Հիվանդանում են մարդիկ, որոնց կարարել են արյան կամ սրտ բաղկացուցիչ մասերի փոխներարկում, թմրամոլները, սանձարիձակ սեռական կյանք վարող անձինք, ինչպես նաև ԶԻԱՀ-ով հիվանդներից ծընված երեխաները։ Առանձնահատուկ խումբ են կազմում արվամոլները (հոմոսեքսուալիստները) Որոշ հեղինակներ գրմում են, որ ԱՄՆ-ում և Եվրոպայում արվամոլների 50%-ից ավելին վարակված է ԶԻԱՀ-ի վիրուսով Քանի որ նրանց մի մասը (բիսեքսուալիստներ) հարաբերություններ են ունենում մասն կամաց հետուակի հիվանդությունն արագորեն բարածվում է։

ՄԻԱՎ-ով վարակվելու պատճառ կարող են դառնալ նաև այն բժշկական գործիքները, որոնց վրա արյան հեփքեր են մնացել և որոնք չեն ախտահանվել Սակայն ժամանակակից պայմաններում այդ դարբերակը չպետք է բնակչության դագնապը հարուցի Այս առումով ընթերցողին պետք է հանգստացնեն ամերիկյան բժշկական վիճակագրության դվյալները, ըստ որի հիվանդների 75%-ը վարակվում է սեռական ճանապարհով, 20%-ը՝ թմրանյութեր ներարկելիս օգտագործած չախտահանված ներարկիչով, 2%-ը արյան փոխներարկման միջոցով, 2%-ը երեխաներ են և միայն 1%-ն են կազմում այն հիվանդները, ում մոտ հնարավոր չի եղել պարզել վարակի ուղին:

Իրականում ԶԻԱՀ-ով հիվանդների ճշգրիտ թիվը աշխարհում հայտնի չէ Համարվում է, որ 80-ական թվականների վերջերին աշխարհում հիվանդ էր շուրջ 100 000 մարդ Ինչ վերաբերում է վիրուսակիրներին, ապա նրանց թիվը մոտենում էր 10 միլիոնի գիրնականների կարծիքով, նրանց կեսը մոտակա ժամանակ կիրականացնա, և մի քանի դարի հետո ԶԻԱՀ-ով հիվանդների թիվը կհասնի մի քանի դասնյակ միլիոնի

ԶԻԱՀ-ի վարակի աղբյուր է հանդիսանում վիրուսով ախտահարված մարդը Դա կարող է լինել դարբեր կլինիկական երևոյթներով հիվանդը կամ անախտանշան վիրուսակիրը, որը նույնիսկ չի ենթադրում իր հիվանդության մասին Ուստի, այսպիսիները ավելի վրանգավոր են համաճարակաբանական դեսակետից:

Ինչպես և ցանկացած վարակիչ հիվանդություն, ԶԻԱՀ-ը ևս սկսվում է գաղտնի շրջանով, որը կարող է վել մի քանի շաբաթից մի քանի դարի. Հիվանդության զարգացման մեխանիզմը բարդ է. ԶԻԱՀ-ի վիրուսը ախտահարում է օրգանիզմի պաշտպանական ֆունկցիան ապահովող հագուկ բջիջները. կփրուկ ընկնում է պաշտպանունակությունը և մարդը խոցելի է դառնում նույնիսկ պայմանական ախտածին մանրեների համար, որոնք ըստ եռլթյան առողջ մարդկանց համար վրանգ չեն ներկայացնում.

ԶԻԱՀ-ը հաճախ սկսվում է մի քանի ավշահանգույցների կամ, ինչպես սովորաբար ընդունված է ասել, գեղձերի մեծացումով մեկ ամսվա կամ ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում Երբեմն դրա հետ մեկտեղ բարձրանում է ջերմաստիճանը (օրվա ընթացքում լինում է 1-2 տեսη), առաջանում են գլխացավ, քնի խախտում, կարող է զարգանալ բծային ցան Սակայն այս ամենի առկայությունը պարփառիր չէ Նշված նշաններն արագորեն անհետանում են և մնում են միայն մեծացած ավշահանգույցները և այն էլ ոչ միշտ. Այսպիսով, սկսում և թաքնված շրջան, որի ընթացքում հիվանդն իրեն միանգամայն առողջ է զգում Որոշ ժամանակ անց կարող են առաջանալ մաշկի թարախային ախտահարումներ, սեռական օրգանների և բերանի խոռոչի լորձաթաղանթների կանոնագործությունը, հասարակ հերպես և այլն Այս ամենը հասդիր է այն միտքը, որ վիրուսը օրգանիզմում քայքայիչ գործունեություն է ծավալում և դանդաղ իջեցնում է նրա դիմադրողականությունը Հաճախ ԶԻԱՀ-ի ակտիվ երևությներին նախորդում են անքացագրելի փենդը, նիհարելը, երկարագուն, առաք քրդնարփադրությունը, լուծը

Եթե ԶԻԱՀ-ի վիրուսը ամբողջովին լուծարում և խմունային համակարգը, առաջանում են թոքաբորբ, արյան վարակում, ուռուցներ (Կապոզիի սարկոմա և գլխուղեղի լիմֆոնա), ակտիվանում են վուլքերկուլոզային և այլ վարակները Կարող և ախտահարվել նյարդային համակարգը, ընդհուած մինչև թուլամբության և հյուծանքի առաջացումով ի դեպ, ԶԻԱՀ-ի ախտորոշումը հնարավոր է միայն արյան լաբորատոր հալքու հետազության օգնությամբ.

Վերը նշված փոփոխություններն ի վերջո հիվանդին բերում են մահվան, քանի որ մինչ օրս չկան ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի բուժման արդյունավետ դեղամիջոցներ. Բժիշկները սահմանափակվում են միայն վարակն ուղեկցող հիվանդությունների և ուսուցքային փոփոխությունների դեմ ծավալած պայքարով.

ՄԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կանխարգելումը համակարգած պրոբլեմ է, որի լուծման համար անհրաժեշտ են ոչ միայն բժիշկների և առողջապահության համակարգի բազմաթիվ օդակների համագործակցությունն ու փոխհամաձայնեցված աշխատանքը Այդ խնդիրն առաջին հերթին պեսքը է դիտարկել սոցիալական փեսանկյունից դրա լուծման գործին մասնակից դարձնելով գանգվածային լրաբամիջոցներին, հասարակական և երիտասարդական փարբեր կազմակերպություններին

Տարբեր մշակութային կենսակարգերով և սովորույթներով հարուստ երկրներում սեքսին վերաբերող հարցերի նկարմամբ դըրսելորդում է ամենափարբեր երեմն հակասական վերաբերմունք՝ սկսած ավանդական պահպանողականությունից մինչև ժամանակակից «ազաբությունը». Այսօր արդեն կարելի է համոզված ասել, որ երիտասարդությունը հևտօքինեք ավելի շատ է հակվում դեպի ազաբ սեռական հարաբերությունները Այս հանգամանքն էլ թելադրում է սեռական լուսավորության ծավալման անհրաժեշտությունը դպրոցներում, բուհերին կից գործող երիտասարդական կազմակերպություններում և այլ ուսումնական հաստափություններում. Այս դեպքում կարենը է ոչ միայն սեռական հիգիենայի և սեռավարակների կանխալուգելման վերաբերյալ կեղեկաբարկության և գիտելիքների գործածումը Ամենակարևորը վարքագծի, ունակությունների, հասարակական միջավայրում դրական հարաբերությունների զարգացումն է, ինչպես նաև զուգընկերոց նկարմամբ պարախանակության դրսնորման, պաշտպանող միջոցների, առաջին հերթին պահպանակների՝ օգտագործման հմտությունների ձևավորումը.

Այս հիվանդությունների կանխարգելումը, անշուշտ, պեսքը է կազմակերպել՝ ելնելով այն սկզբունքից, թե մարդը բնակչության ո՞ր խմբին է պատկանում Այսպես, փորձագետները առանձնացնում են մարդկանց երկու խումբ, որոնց առաջին հերթին պիտի

հասցեագրվեն սեռավարակների կանխարևելյան միջոցառումները Սուածին խումբը սեռավարակներով հիվաւուանալու բարձր ռիսկի և դրանք փարածող անձինք են ինչպես պունիկներն ու նրանց զուգընկերները Երկրորդ խումբը նրանք են, որոնց սեռավարակներով հիվանդանալու վրանգը սպառնում է ապագայում երեխաները և դեռահասները Այդ խմբերին հասցեագրված ջանքերը պետք է խրախուսեն վարքագծի դրական փոփոխությունները պահպանակ օգտագործելը, սեռավարակներով վարակվելու դեպքում բժշկական օգնության դիմելը և սեռական զուգընկերների լավի կրծադրումը Սեռավարակների կանխարգելումը բժշկի կողմից և նթադրում է նաև հիվանդության աղբյուրի այն մարդկանց բաւահայտումը, որոնցից դարածվել է վարակը Առողջապահության նախարարության անցկացնում են նաև առողջարարական դարբեր գլանգվածային միջոցառումներ՝ մասնավորապես, այս կամ այն իւստանդության կապակցությամբ բժշկական օգնության դիմած անձինք հետազոտվում են սիֆիլիսի հայտնաբերման համար, միզասեռական օրգանների հիվանդությունների դեպքում գոնոռեայի և դրիխտանոնիազի, իսկ ռիսկի խմբի անձինք բոլոր նշված հիվանդությունների, այդ թվում նաև ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի հայտնաբերման համար:

Ինչպես արդեն ասվել է, սեռավարակների կանխարգելման նպատակով ծավալած պայքարի հաջողությունը լառաջին հերթին պայմանավորված է մարդկանց վարքագծով: Դրա համար ել չվարակվելու և առողջության պահպանման առաջին նախապայմանը անկանոն սեռական հարաբերություններից հրաժարվելուն է Կանխարգելման հարուկ ձև կարելի է համարել նաև կանխարգելիչ բուժումը, որը կարարվում է հիվանդի հետ սեռական հարաբերություն ունեցած, բայց դեռևս չհիվանդացած. մարդկանց մոտ Բուժման այդ մեթոդի նպատակահարմարությունը որոշում է մասնագետը՝ սեռական հարաբերության ժամկետը և վարակվածության հնարավորությունը բացահայտելու հետո: Այդ նպատակով բժիշկը պետք է հետևողականորեն բացահայտի սեռական գուգընկերներին: Ակնհայտ է, որ նրանց թաքնվելը, իմշալու նաև վարակի


աղբյուրը թաքցնելը նպաստում են սեռավարակների փարածմանը, որը կարող է բազմաթիվ ընդանիքների ողբերգության պարճառ դառնալ Ռւսիի, հիվանդի պարփքն է օգնել բժշկին՝ դրանց բացահայտման գործում Միաժամանակ նա պետք է իր զուգընկերներին համոզի և բացադրի անպայման բժշկին դիմելու կարևորությունը Հիվանդը պետք է ընկալի իր պարասխանաբարվության չափն այն մարդկանց առջև, որոնց հետ ունեցել է ինպիմ հարաբերություններ Կանխարգելից բուժումը, որ շատ կարճ ժամանակում կարարվում է դեղամիջոցների մի քանի ներարկումներով և ամբողջապոյ պայմաններում (պոլիկլինիկայում), ոչ մի անհարմարություն չի սպեղծում, հուսալի և ապահովում է սեռավարակներից լիարժեք պաշտպանվածությունը

Ասվածքը վերաբերում է հասարակական կանխարգելից միջոցառումներին, որոնք ուղեկցվում են կազմակերպական և ֆինանսական կարգի որոշակի դժվարություններով, կենսագործման համար հաճախ պահանջում են պետական մոդելում. Հասարակական կանխարգելից միջոցառումներին զուգահեռ բժիշկները խորհուրդ են դրանք իրականացնել նաև սեռավարակների անհարական կանխարգելում Դա իրագործվում է մաշկավեներական կամ այլ առողջապահական հիմնարկություններում, որտեղ կան մաշկավեներական բաժանմունքներ կամ կարինեփներ, կամ ել անհարական կանխարգելման կերպերում

Անհարական կանխարգելման միջոցառումները պարզ ու հասարակ են ջրով կարարվում և սեռական օրգանների լվացում, մարմնի այդ հարվածների հափուկ ախտահանից լուծույթով մշակում և այդ լուծույթի աննշան քանակության ներածում միզուկի մեջ: Անհարական կանխարգելում խորհուրդ է դրվում կարարել սեռական հարաբերությունից հետո առաջիկա 2 ժամվա ընթացքում, քանի որ միայն այդ ժամանակահարվածում է սեռավարակներից պաշտպանվածության արդյունավետությունը հասնում 70-80%-ի Սակայն մեթոդն իր անհարմարության և ցածր արդյունավետության պարճառով վերջին դարիներին չի կիրառվում

Պետք է մեկընդիշությունների կանխարգելման նպատակով փարբեր դեղամիջույնների, և սպիկապես հակաբիուրիկների գործածությունը կաթիւարգելիչ ռիցույ չեւ և խսդիվ արգելվում է Ընդհակառակը, դրանք պարագանում հաճախ ի հայր են զալիս հիվանդությունների քողարկված կառն դասելաղ ընթացող ձեւը, որոնք բացահայտվում են ամիսներ կառն դրաբիւներ անց Հիվանդներն այս դեպքում վարակի աղբյուր են ևս տարիսամում, իսկ քրոնիկական ընթացք կրող սեռավարակների լի են լուրջ բարդություններով

Վերջին դասմամյակում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի դրամագուման հետեւանքով լայնորեն քարոզվում են պաշտպանված (անվանգ) սեքսի սկզբունքները՝ առաջին դեղում նշելով պահապանակների կիրառումը, որպես սեռավարակների կանխարգելման առենուարդյունավեկ միջոց Պահպանակը ոչ միայն հուսավիրելու ուսուցչականում է սեռավարակներից, այլև անցանկալի հղիություններ (Ակ 24) Պահպանակների ճիշտ օգտագործման խորհուրդների ավելի ու ավելի



Ակ 24. Պահպանակն անթափանց է հետևյալ վարակների համար՝
ա սիֆիլիսի հարուցիչ դժգույն լրինպոննմ
բ գոնոռեայի հարուցիչ գոնոկոնկ
գ. ՄԻԱՎ
դ սպերմակողուդ

հաճախ են հայփնվում սեռական լուսավորությանը և սեռավարակների կանխարգելմանը նվիրված նյութերում (նկ. 25) Հրապարակվում են պահպանակների ճիշտ օգտագործմանը վերաբերող գրքույկներ և ցուցանակներ։ Այս դեպքում սովորողներին հակաբեղմնավորիչների կամ պահպանակների ճիշտ օգտագործումը սովորեցնելը չի նշանակում նրանց մղել սեռական կյանք սկսելուն Չե՞ որ երիտասարդները այս կամ այն ճանապարհով՝ ընկերներից, ծանոթներից, զանգվածային լրատվամիջոցներից սփանում են տեղեկություններ սեռական կյանքի, պահպանակների և այլ հարցերի վերաբերյալ։ Մեր կարծիքով, ավելի ճիշտ է, որ երիտասարդությունը գրագետ աղբյուրներից և ուսումնական դասընթացի սահմաններում սովորի ու վարժվի դրանց օգտագործման, պարասիանափու վարքագծի և պաշտպանված սեքսի հարցերին



**Նկ. 25. Սեռավարակների
կանխարգելմանը
նվիրված իրատարակու-
թյուններ**

ՎԵՐՋԱՔԱՆ

Կարծիք կա, թե սեռական դաստիարակությունի բարոյագեղա-
գիկական դաստիարակության մասն և, որն օժանդակում է ֆի-
զիկական, բարոյական և հոգեբանական այն հագեցությունների
ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են սեռերի փոխհարարելու-
թյունների ընթացքում Այսինքն սեռական դաստիարակությունի
հասուն մարդուն, ընդամիքի ապագա անդամին և քաղաքայուն
անհրաժեշտ սեռերի բարոյագիկական ունակությունների հիմքն և
Սեռական դաստիարակության արդյունքը կախված է մի շարք
գործոններից, այդ թվում նաև ծնողների, ուսուցիչների, դաստիա-
րակմերի համապետ ջանքերից

Սեռական լուսավորության նպագակն ավելի համեստ է, այն
է երիտասարդներին ծանոթացնել սեռերի զարգացման անարո-
միական և ֆիզիոլոգիական առանձնահագեցություններին, ընդհա-
նուր ինչպես նաև սեռի և սեռական հարաբերությունների հիգիե-
նային, սեռավարակմերի ընթացքին և նրանց կանխարգելմանը
Ահա թե ինչո՞ւ այս համալիրը լինելով նախևառաջ քժշկահոգեբա-
նական, սովորաբար լուսաբանվում է բուժաշխափողների կողմից:

Սեռական դաստիարակությունը և լուսավորչությունը, անկաս-
կած, փոխկապակցված են և սերպորեն առնչվում են բարոյական
վարվելակերպի, աճող սերնդի ներդաշնակ զարգացման, առողջ ու
ամուր ընդամիք ձևավորելու հարցերին. Երիտասարդները սպա-
սում են գիկակ մարդկանց բարյացակամ և խելացի խորհուրդնե-
րի, իրենց հուզող հարցերի պարասխաններին, որոնք չպետք է
քողարկված լինեն գաղտնիքի շղարշի գործիք: Որքան էլ ցավալի է,
դեռահասները, այնուամենայնիվ, միայնակ են մնում իրենց սեք-
սուալ ապրումների հետ: Մեծահասակմերի խնդիրն է ցրել սեռե-
րին առնչվող հարցերի ոլորտում իշխող անորոշության մշուշը, ո-
րի պատճառը հասարակության մեջ ցայսօր գոյագրելող նախա-
պաշարումներն են Որոշ ծնողներ և ուսուցիչներ երեխաների հե-
տքաքրքրությունը մարդկային փոխհարաբերությունների այդ ոլոր-
տի, ինչպիսին է ինտիմ հարաբերությունը, համարում են սանձար-

ձակություն Դա թյուրիմացություն է Պատաճիների առաջադրած «Արքանկապ» հարցերը լիարժեք պատասխան են պահանջում Դրանցից խուսափելու անհմասք և առնվազն անպատասխանագույն քայլ է

Դժվարությունները, որոնք ունենում են դեռահասները, շրջակա աշխարհի հետ նրանց փոխհարաբերությունների բարդությունները հաճախ պատճառաբանված են այն «ֆիզիոլոգիական փոթորիկով», որը կապարվում է նրանց օրգանիզմում սեռական հասունացման շրջանում։ Օրգանիզմի այդ վերակառուցումը, աքսելերացիայի և ժամանակակից պայմանների հետ կապակցված, ավելի շուրջ է կապարվում Ահա թե ինչու երիտասարդներն անփեղյակ են մնում իրենց օրգանիզմում կապարվող փոփոխություններին։

Այդ պատճառով էլ այս գրքում բավական մանրամասն լուսաբանված են զարգացող օրգանիզմի անապոմիական ու ֆիզիոլոգիական առանձնահարքերությունները, ուշադրություն է հարկացված այն գործոններին (ոեժիմ, անձնական հիգիենա, սեռական կյանքի հիգիենա), որոնցով պայմանավորված է դեռահասի նորմալ զարգացումը Զգալի դեռ է հարկացված նաև սեռավարակներին և նրանց կանխարգելմանը, ինչպես նաև անցանկալի հղիությունից և այն ոտեկոցով բարդություններից խուսափելու հարցերին

Ակնհայտ է, որ գիրքը հասցեագրված է սեռական աշխարհ դեռ նոր ուղղ դնող և ընդունեկան հարաբերությունների մասին դեռևս շմբածող երիտասարդներին։ Դրա համար էլ փորձ է արվել կյանքի առողջ վարվելակերպի խնդիրները զուգակցել երջանիկ ամուսնության, բարեհաջող ընդունիքի սկեղծման հարցերին։ Չե՞ որ դրանք այն նպատակներն են, որոնց երիտասարդները պետք է միշտ ճգփեն դեռ պատաճեկան հասակից

Սեբառոգիական բառարան

Աբստինենցիա - սեբառուալ- սեռական ժումկալություն

Աբորիվ - արհեստական վիժում

Աքսելերացիա - չափից արագ, ժամանակից շուրջ զարգացում

Անդրոգեն հորմոններ - արական սեռական հորմոններ

Անօրգազմիա - օրգազմի բացակայություն

Բիսեբառություն - սեռական հակում երկու սեռերի նկարմամբ

Գինեկոմաստիա - կրծքագեղձերի մեծացում պողամարդկանց մոտ

Գենիփալգիա - ցավի զգացում արդաքին սեռական օրգաններում

Գերոնփռֆիլիա - սեռական հակում սեծահասակ անձանց նկարմամբ

Դեֆլորացիա - կուսաթաղանթի խախտում (պատրիում)

Զոռֆիլիա - սեռական հակում դեպի անասունները

Երեկոցիա - ուղղում, լարում՝ առնանդամի կանգնում սեռական գրգռվածության ժամանակ

Երուպիզմ - փրփանք հիվանդագին բարձր սեռական հակում

Էնդոկրին գեղձեր - ներզագիչ գեղձեր, որոնք ծորաններ չունեն և արտազարուկները (հորմոնները) անցնում են անմիջապես արյան մեջ (օրինակ՝ սեռական գեղձ, մակերիկամ, վահանագեղձ եւ այլն)

Էյակուլացիա - սերմնաժայթքում

Էրոգեն գորի - մարմնի դարբեր հարվածներ, որոնց խթանումը առաջացնում է սեռական գրգռվածություն, անգամ օրգազմ

Էստրոգեն հորմոններ - իգական սեռական հորմոններ

Եքսիբիցիոնիզմ - սեռական հակում մերկացված սեռական օրգանների ցուցադրում սեռական բավարարում սպանալու միջումով

Ինյեսփ - արյունապղծում, արյունակից բարեկամների միմյանց հետ սեռական կապ (հարաբերություն), ամուսնություն

Ինփիմ կապ - սերպ (սեռական) հարաբերություն պայմանավորված հոգեկան եւ ֆիզիկական նպերնությամբ

Իմպուտենցիա - սեռական անկարություն (անկարողություն). թուլություն

Ինֆանտիլիզմ - մանկականություն, ֆիզիկական ու միավոր շրիասություն

Լակտացիա - կրծքով կերակրություն

Լիբիդո - հեշտանք, կիրք, սեռական հակում

Լեսբիական (լեսբոյան) սեր - կնոջ սերը, սեռական հակումը դեպի կինը (սապֆիզմ, լեսբիականություն), կանանց հանասեռամոլություն

Լուես - սիֆիլիսի այլ անվանումը

Լուբրիկացիա - խոնավացում, լորձի գերարդադրում կնոջ արդաքին սեռական օրգաններում սեռական գրգռվածության ժամանակ

Լյուստեին - ծվարանի դեղին մարմնուած արդադրվող հորմոն

Կասպրացիա - կտրում, ներքինացում, ամորձիների հեռացում

Կլիփոր - ծլիկ, կնոջ գրգռվող (երեկոփոլ) սեռական օրգան համապատասխանում է փղամարդու առնանդամին

Կլիմաքս - գարիքավոր կնոջ կյանքի այն շրջանը, երբ ծվարանը եւ արգանդը դադարում են գործելուց

Կոիփուս - սեռական հարաբերություն (ակփ)

Կոնֆրացեպիվներ - հակաբեղմնավորիչներ, որոնք կիրառվում են հղիությունը կանխարգելելու համար

Կոնֆրացեպցիա - հղիության կանխարգելում

Կրիպտորխիզմ - գաղփնամործություն, երբ ամործին իր իջման ճանապարհին կանգ է առնում որեւէ փեղ եւ փոշփի խոռոչ չի հասնում

Կուննիլինգուս - կնոջ սեռական օրգանների գրգռումը լեզվով եւ շրթունքներով հաճույք պարբռելու նպագակով

Հերերոսեքսուալիզմ - վարասեռական, հակումք հակառակ սեռին

Հերմաֆրոդիփիզմ - երկսեռություն (արուեգություն). միեւնույն անհափի մոփ արական եւ իգական սեռերի հավեկանիշների առկայություն

Հերպես - վիրուսային վարակ, որն առաջացնում է սեռական օրգանների բշտիկային եւ վերքային ախտահարումներ

Հիմեն - կուսաթաղանթ (Հիմենեյ՝ լնգանիքի եւ ամուսնության առասպելական ասդրված)

Հորմոն - ներգագիչ գեղձերի արդազագուկ

Հոմոսեքսուալություն - համասեռամոլություն, սեռական հակում դեպի նույն սեռ

Մազոխիզմ - սեռական հակում, որի ժամանակ զուգընկերներից մեկը սեռական բավարարվածություն է սփանում մյուսի պարբռառած ֆիզիկական վանշանքներից

Մասկուլինիզմ - արականություն

Մասդրութացիա - ծեռնաշարժություն, օնանիզմ

Մասդիք - կրծքագեղձի թարախսային բորբոքում

Մենարխիա - առաջին դաշտան

Մենսդրութացիա - դաշտան, ամսական, («մենսես»- լադիներեն ամիս)

Մենոպաուզա - դաշտանադադար, կլիմաքս

Մուգացիա՝ ձայնի - դեռահասների ձայնի փոխվելոր կապված սեռական հասունացման հետ

Նարցիսիզմ - սեռական հակում դեպի իր մարմինը՝ առութուերութիզմ

Նիմֆոմանիա - սեռական հակում չափազանց խիստ արդարացված սեռական կրծքագություն կնոջ մոփ

Պեղոֆիլիա - սեռական հակում դեպի երեխաները

Պեղեռասպիա - սեռական հակում արվամոլություն, փղամարդու հոմոսեքսուալիզմ (փղամարդու սեռական հակումը դեպի փղամարդը)

Պեղինգ - երօգեն գոտիների փոխադարձ գգվանքներ զուգընկերների կողմից սեռական բավարարվածություն սպանալու նպագակով

Պենիս - առնանդամ

Պոլուսիա - երազախաբություն, ինքնաբեր սերմնաժայթքում փղամարդու մոփ անկախ սեռական հարաբերությունից

Պրոմիոկոիփեփ - անկանոն, բազմաթիվ սեռական կապեր

Պրոսփափիփ - շագանակագելիքի պրոսփափայի ախտահարումը որոշ սեռավարակների ժամանակ

Սեռավարակներ - հիվանդություններ առաջացած մանրէներից, վիրուսներից եւ այլ հարուսիչներից սեռական շվիման ժամանակ, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ (ՍՃՓՀ)

Սպերմա - սերմ, փղամարդու սերմնահեղուկ

Սպերմափողիդ - արական սեռական բջիջ

Սմեգմա - թլիաճարպ (փղամարդու), ծլկաճարպ (կնոջ)

Սեքսոլոգիա - սեռաբանություն

Սեքսոպաթոլոգիա - բժշկության բաժին, որն ուսումնասիրում է սեռական շեղումները, հիվանդությունները

Սաղիզմ - սեռական հակում, որի ժամանակ զուգընկերներից մեկը սեռական բավարարվածության է հասնում մյուսին ֆիզիկական եւ հոգեկան փանջանքներ պատճառելիս

Վագինիզմ - հեշտոցի եւ կոնքի հագակի մկանների ռեֆլեկտոր կծկում, որը դժվարացնում է սեռական հարաբերությունը

Վուայերիզմ - սեռական հարաբերության եւ ուրիշի սեռական օրգանների դիվման հակում

Տրիխոմոնիազ - առավել բարածված սեռավարակ, որի հարուսիչը դրիխոմոնադն է

Տեսդոսպերոն - արական սեռական հորմոն

Տրանսվեսփիզմ - սեռական հակում հակառակ սեռին նմանվելու եւ նրանց զգեստները կրելու

Տրանսսեքսուալիզմ - սեռական հակում՝ սեռային պատկանելության եւ հակումի անձի ճգփումը պատկանելու հակառակ սեռին

Ուրեթրա - միզուկ

Ուրեթրիս - փարբեր պատճառներից առաջացած միզուկի բորբոքում վարակներ, ազդակներ եւ այլն

Օվուլացիա - ծվազափում, ծվաբջջի ազափումը ծվարանի պափ-ճուկից

Օնանիզմ - փես մասսուրբացիա

Օրգազմ - հեշտանքի զգացման գերագույն ասդիճանը սեռական հարաբերության ժամանակ

Ֆալոպյան փող - արգանդափող, ծվափար խողովակ

Ֆելացիա - առնանդամի գրգռում լեզվով եւ շրթունքներով սեռական հաճույք պատճառելու նպափակով

Ֆեմինիզմ - կանացիություն

Ֆիմոզ - թլիփի նեղացում փարբեր պատճառներից բնածին, բոր-բոքման եւ այլ հիվանդությունների հետեւանքով

Ֆրիկցիա - առնանդամի շարժումները (շփումները) սեռական հարա-բերության ժամանակ

Ֆրիգիդություն - կնոջ սեռական սառնություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խորոսյան Ս.Ա. Խորհուրդներ սեռական դաստիարակության մասին «Հայաստան», Երևան, 1971, 28
2. Խանդամիրյան Բ.Ե. Երեխաների սեռական դաստիարակությունը Հայպեպուամանկիրաբ, Երևան, 1963, 60.
3. Հյուսյան Վ.Ա., Աղասարյան Ռ.Ա. Երբ թերթում ենք կյանքի փակ էջերը: «Հայաստան», Երևան, 1967, 121.
4. Միրազյան Մ.Ե., Խանդամիրյան Բ.Ե. Առողջ ամուսնություն, առողջ ընկանյիք «Հայաստան», Երևան, 1983, 20.
5. Բատանջիսев Բ., Կաբակчиева Ե., Рандев Պ. Доверительно об интимном Москва, 1991, 95 с
6. Венерические болезни /ред. О. Шапошникова. М., "Медицина", 1980, 528 с
7. Вислоцкая М. Искусство любви Москва, "Советский спорт", 1992, 64 с
8. Владин В., Капустин Д. Вслух о сексе и не только о нем Москва, 1989, "Знание", 64 с
9. Владин В., Капустин Д. Гармония брака Челябинск, 1990, 240с
10. Владин В., Капустин Д. Гармония семейных отношений. Петрозаводск, "Карелия", 1991, 335 с
11. Имелинский К. Психогигиена половой жизни М, 1983, 131 с
12. Имелинский К. Сексология и сексопатология М, 1986, 420 с.
13. Исаев Д., Каган В. Психогигиена пола у детей Л., 1986, 336 с.
14. Исаев Д., Каган В. Половое воспитание детей (медицинско-логические аспекты). Ленинград, "Медицина", 1988, 158 с
15. Князев В. Тайна для двоих (беседы врача о психогигиене интимной жизни) Хабаровское книжное издательство, 1990, 320 с.

16. Кришталь В., Григорян С. Сексология Харьков, 1999, с 1150.
17. Колесов Д., Сельверова Н. Физиологопедагогические аспекты полового созревания М, 1978, 211 с.
18. Кон. И. Введение в сексологию. М., "Медицина", 1988, 318 с
19. Контактные инфекции, передающиеся половым путем. П/ред М Маврова Киев, "Здоровья", 1989, 384 с
20. Марьясис Е. Интимный разговор Ставропольское книжное издательство, 1990, 352 с
21. Петровский А. Проблема развития личности с позиций социальной психологии Вопрос Психол, 1984, N4, 15-19
22. Росситер Ф. Все о сексе Москва, 1990, 96 с
23. Сердюковская Г. Гигиенические аспекты воспитания и охраны здоровья подрастающего поколения М, 1980, 35 с.
24. Святощ А. Женская сексопатология. М, 1988, 180 с
25. Скрипкин Ю., Шаранова Г., Селисский Г. Болезни, передающиеся при половых контактах Л, "Медицина", 1985, 286 с
26. Спок Б. О жизни и любви простыми словами "Пилигрим", 1999, 240 с.
27. Тарусов А. Практическое пособие по половому воспитанию Рыбинск, 1995, 52 с
28. Шнабль З. Мужчина и женщина: интимные отношения Кишинев, 1982, 233 с
29. Якобашвили Р. Гигиеническое воспитание населения по вопросам сексуального здоровья Сов. Здравоохранение, 1984, N8, с. 24-29
30. Basow S. Cultural Variations in sexotyping. Sex Roles, 1984, N 7-8, p 577-581.
31. Kinsey A. Sexual Behavior in the Human Female Philadelphia, London, 1953, p 305
32. Kozakiewicz M. Sex education and adolescence in Europe. London, 1981, 305 p

33. Penneys N. Skin Manifestations of AIDS J B Lippincott comp Philadelphia, 1989, p 210
34. Tieger T. On the biological basis of sex differences in aggression Child Dev, 1980, N4, p 943-948
35. McNeill E., Gilmore C., Finger W., Lewis J., Schellstede W. The Latex Condom, FHI, 1998, 80
36. Morse S., Moreland A., Thompson S. Atlas of Sexually transmitted diseases Gown Med. Publishing, N4, London, 1990, p 215

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Բուռն փոփոխությունների շրջան	5
Ինպիմ կյանքի հոգեֆիզիոլոգիա	10
Ճանաչիր քեզ	13
Ինպիմ հարաբերությունների հիգիենա	28
Սեռական խանգարումներ (կեղծ և խսկական)	39
Անպարհություն	45
Հղիություն	49
Անցանկալի հղիություն	61
Հղիության կանխարգելում	63
Թեթևամբության պարուղները	85
Սիֆիլիս	90
Գոնոռեա	95
Տրիխոմոնիազ	98
Ոչ գոնոռեային միզուկաբորբեր	100
Վիրուսային միզասեռական վարակներ	102
Մակաբուծային հիվանդություններ	105
Սնկային հիվանդություններ	106
Զեռքբերովի իմունային անբավարության համախտանշան	108
Սեռավարակների կանխարգելում	112
Վերջաբան	117
Սեքսոլոգիական բառարան	119
Գրականություն	124

